ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3. 1965 Общественные науки

ՀԱՄԱՁԱՍՊ ԱՍԱՏՈՒՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ավելի քան վեց տասնյակ տարիներ դրական-հասարակական, գիտական-մանկավարժական բեղմնավոր գործունեություն ծավալեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ Համազասպ Ասատուրի Համբարձումյանը:

Հ. Ա. Համբարձումյանը ծնվել է 1880 թ. Բասարգեչարում: Սկզբնական կրթությունը ստացել է Երևանում, ապա ավարտել Թիֆլիսի Ներսիսյան վարժարանը և Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Ուսումնատենչ երիտասարդը 1908 թ. հաջողությամբ ավարտում է նաև Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, և որպես իրավաբան երկար տարիներ աշխատում է Թիֆլիսում:

Այդ տարիներին էլ նա հայտնի է դառնում իր դրական-հասարակական գործունեությամբ: Հրատարակում է բանաստեղծությունների մի քանի ժողովածուներ՝ Վիեննայում, Թիֆլիսում, Պետերբուրգում: Հ. Ա. Համբարձումյանը մտերմական կապեր է հաստատում Հովհաննես Թումանյանի հետ, ակտիվորեն մասնակցում մեծ բանաստեղծի գլխավորած հայ գրողների ընկերության աշխատանքներին և որոշ ժամանակ դառնում այդ ընկերության քարտուղարը:

1925 թ. Հ. Ա. Համբարձումյանը տեղափոխվում է Լենինգրադ և արդեն որպես հասունացած գիտնական, դասախոսություններ կարդում մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում Լենինգրադի պետական համալսարանում:

1945 թ. մինչև իր կյանքի վերջը Հ. Ա. Համբարձումյանը Երևանում ծավալում է գիտա-մանկավարժական բեղմնավոր գործունեություն: Եվրոպական և անտիկ գրականության վերաբերյալ նրա կարդացած դասախոսությունները մեծ բավականությամբ են ունկնդրել Երևանի պետական համալսարանի, ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետների ուսանողները:

Այդ բոլորի հետ միասին Հ. Ա. Համբարձումյանը առավելապես հայտնի է որպես անտիկ գրականության թարգմանիչ և պրոպագանդիստ: Նա երկար տարիներ աշխատել է դասական գրականության խոշորագույն ներկայացուցիչներ՝ Հոմերոսի, Էսքիլեսի, Սոֆոկլեսի ու Էվրիպիդեսի ստեղծագործությունների հայերեն գեղարվեստական թարգմանությունների վրա: Երկարամյա աշխատանքի արդյունք են Հ. Ա. Համբարձումյանի հրատարակած «Հույն ողբերգակներ» (1954 թ.), «Իլիական» (1956 թ.) և «Ոդիսական» (1958 թ.) չափածո թարգմանությունները՝ գիտա-բանասիրական ընդարձակ ծանոթագրություններով:

1965 թ. լույս տեսավ Հ. Ա. Համբարձումյանի «Մտորումներ Հոմերոսի մասին» ծավալուն ուսումնասիրությունը, որտեղ հանրագումարի են բերված Հոմերոսյան պոեմների վրա նրա կատարած տասնյակ տարիների աշխատանքի արդյունքները:

1965 թ. փետրվարի 3-ին ծանր և երկարատև հիվանդությունից հետո մեզանից ընդմիշտ հեռացավ հմուտ թարգմանիչ, անխոնջ մանկավարժ ու բանասեր Հ. Ա. Համբարձումյանը, որի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում: